ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոս, 2026 թվականի № 77-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՌԱՋԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՑԱՆՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2026 թվականի օգոստոսի 24-ի N ՀՄ-02/509/26 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջինի միջազգային ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի՝ սահմանելով, որ սույն որոշմամբ նախատեսված ժամանակահատվածում Ընկերությունը նաև իրավասու է ուղիղ եթերով հեռարձակել կարևոր իրադարձությունների վերաբերյալ՝ սույն որոշմամբ հաստատված հաղորդացանցով չնախատեսված տեսալսողական հաղորդումներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

27օգոստոս, 2026 թվականի

ք. Երևան